

խրուած, կէսը ջրի երեսին տարուբեր, իմ սրինգն է կեցած, վերուցի ուրախութեամբ ու մաղախիս մէջ դրի»:

Կա՞յ միթէ ասկից աւելի վաւերական ապացոյց մեր Նախնեաց մեզի թողած այն աւանդութեան, թէ Գրըգուռն ու Մեղրագետը իրարու հետ գաղտնի յարաբերութիւն, հաղորդակցութիւն կը պահեն, թէ Գրըգուռն ալ Սեւանի նման լիճ է ունեցեր, որը՝ լացից չորացել ու հրաբխացել է: Մի քանի խօսք եւս Գրըգուռն անուան ծագման շուրջ:

Ըստ Բնաշխարհիկ բառարանին, Գրըգուռն անունը առաջ է եկեր պարսիկ թագաւորի մը տղու անունէն. չկայ ասկից աւելի կեղծ, բռնազրօսիկ եւ անհիշտ բացատրութիւն մը, չկայ այդպիսի անգոյ աջեմ թագաւոր մը, որ մեր երկիրը ոտք կոխած լինի, ու անոր անարժան զաւակը մեր նուիրական լեռան անուանադիր սեպուի (эпониме): Գրըգուռն անունը հարազատ հայկական է, տոհմային է ու տարօնական:

Գուռ բառը կը նշանակէ քարէ աւազան, ջրամբար եւ մեծ տաշտ. իսկ Գրըգուռն կամ Գերգուռն, բաղադրութիւն է երկու բառերու, Գեր եւ Գուռ բառերուն: Գեր՝ կը նշանակէ վեր, բարձր, աւելի քան, որով Գրըգուռնը գերադրական ձեւն է աւազանին. Գրըգուռն:

Այլ կը բաւէ, մենք աշխարհագրական, կամ երկրաբանական դասընթացքի մէջ չենք. ես պէտք է ածապարեմ մայրս տեսնելու: Ու զայն կը գտնեմ տանը մէջ. թոնիրը վառած է, ու խաչերկաթով անոր մակերեսը չորս աչքերու է բաժնած, որոնց վրայ օրուայ կերակուրը կ'եփուի. ճիշտ այդ պահուն, բաց դրան բարաւորին վրայ մէկը գաւազանով թաք թաք կը ծեծէ. մայրս ինձ դառնալով կ'ըսէ. «Ճ'լ լաօ, իրիշկէ տես ո՞վ է», կը նայիմ ու կը դառնամ: Մա՛, աշուղ Կարօն է, իսկ աշուղ Կարօն իմ ետեւից ներս եկած է արդէն.

— Բարի լոյս քէ խաթուն դեղձուն, իմա՞լ իք, իմա՞լ չիք:

— Ասծու բարի՛ն, ջանախբէր, բարին արեւուտ, փողան մը մընայ յառաջ եկուր, լա՛օ զաթոռ տուր ջանախբօր:

— Քուրիկ դեղձուն, զի՞նչ կ'ուզես որ քեզի նուագեմ էսօր, մայրս խմորի գունդերը պարզելով կը պատասխանէ, էմլէ սուրբ Կոյսի դովքն արէ, ու բերան մընձ ալ սուրբ Կարապետէն: Աշուղ Կարօն զալիւրի պարկն ու շաւիուր (քեամանչա) ուսէն վար կ'առնու, կը նստի ու շաւիուին փորը (սկաւառակ) ու լարերը քիչ մը կ'իւղոտէ, հազով մը իր կոկորդը կը մաքրէ ու կը պատրաստուի երգել ու նուագել իր շաւիուր: Միջանկեալ ասեմ, որ Տարօնոյ մէջ աշուղները ընդհանրապէս կոյր են. իրենց ծննդեան առաջին տարիներուն, ծաղկախտէ կը վարակուին, բժշկական խնամքի պակասէն, իրենց փափուկ դէմքին վրայ ոսպնաչափ փշտիկներ կը բացուին, որոնք կ'ուռնին եւ թարախով կը լեցուին, ապա կը ճաթին, կը չորնան եւ փո-

սիկներ կը կազմեն. տեղացիները քոնուկ կամ քոնած կ'անուանեն զայն. դժբախտաբար այդ փշտիկները կը բացուին նաեւ անոնց աչքի բերբերուն վրայ, ու ընդմիշտ կոյր կը մնան: Երբոր կը մեծնան, Սուրբ Կարապետի շնորհին կը դիմեն երազով ու կը դառնան աշուղ: Սակայն ասոնք Նահապետ Քուչակական եւ կամ Սայեաթ Նովայա-կան աշուղներ չեն, կի՛նն ու դի՛նին անոնց ներշնչման մօտ չեն կազմեր, չեն ամուսնանար, մի տեսակ կրօնական դասակարգ կը կազմեն ու միայն ու միայն Սուրբ Կոյս Աստուածածնայ ու Մշաւ Սուրբան Սուրբ Կարապետի մասին գովասանք կ'երկնեն ու գիւղէ գիւղ կը պըտտին: Սակայն մեր աշուղ Կարօն ասոնցմէ չէ, ո՛չ կոյր է, ո՛չ քրոտուկ է, բաւական ալ բարեձեւ անձ է, կ'ըսուի թէ՛ ժամանակին անյաջող սէր մը ունեցեր է, իր սիրտը խորտակուեր է ու աշուղութեան է նուիրուեր:

Ահա Սուրբ Կոյսի գովքէն պատառիկ մը.

Անարատ կոյս էիր դուն, մաքուր մնացիր
Զոսկի սափորն առիր, ջուրն ի գնացիր.
Գարբիէլն աւետելով, ողբալով լացիր.
Քրիստոսի մէրն ես դու, մայր Աստուածածին:

Քու հէրն էր արդար, դուն էիր մաքուր կոյս,
Ծնար զՅիսուս որդին, բերիր մեզի լոյս.
Տառապող մարդկութեան ծագեցաւ նոր յոյս.
Քրիստոսի մէրն ես դու, մայր Աստուածածին.
Օգնական, պահապան մըր Հայոց ազգին:

Զատուրալէն գովեց քրդի զանգան,
Արեւելք, արեւադարձ չըկէր քե նրման,
Յորժամ կ'իջնէ Քրիստոս, ան է դառաստան,
Դուն բարեխօս էղնիս, մայր Աստուածածին,
Օգնական, պահապան այս տանուտեղին:

Ապա, ըսպէ մը կը լռէ աշուղը, վերստին կ'իւղէ շաւիուին լարերը եւ նորէն հազով մը կը մաքրէ իր կոկորդը ու վերստին կը սկսի. այս անգամ աւելի ոգեւորուած ու խանդոտ. բողոք է թէ աշուղն է, դժուար է բացատրել:

Մեղա՛յ, տէր մեղայ,
Բերան մը ըսեմ քե, հայր մեղայ.
Լերինք ու յերկիր քո ահէն կը դողայ.
Այն արարչական, բազուկն է փրկչական,

Խնամքն տէրունական,
Իրիք հարիր յերսուն հայրապետաց սուրբ Նշան,
Օգնական, պահապան էղնին
Մըր Հաոց ազգին, այս տան դատաւորին:

Ու կը հասնինք դէպի սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ բանձրիկ, բոլոր,
Ճամբայ ունի օլոր, մօլոր,
Կ'երթան, կիգան շատ շատ ըխտաւոր.
Թէ ձիաւոր, թէ ոտաւոր.
Ջուլար կու տայ ձիաւորին,
Մուրադ կու տայ ոտաւորին,
Մուրադատուր սուրբ Կարապետ,
Մըշու Սուլթան սուրբ Կարապետ:

Եւ աշուղը կը պատրաստուի մեկնելու, մայրս ինձ դառնալով
կ'ակնարկէ. — Ել լաօ, առ զքասէն զարկ էն կարասի մէջ, չորս կրծք
ալիւր լեցուր ջանախոր տոպրակի մէջ:

Ու աշուղը կը մեկնի կրկնելով մինչեւ դուռը.

«Քուրիկ դեղձուն, Աստուած զքու խէր խարուլ էնէ, զքու մէկն
հազար էնէ»:

Ու ես ալ կ'աճապարեմ դուրս ելնելու, որովհետեւ օրուան ճիշդ
այն պահն է, որ խորոտիկ Դերեկոն օրօր, չօրօր քալելով, մեր բա-
կի առջեւէն կ'անցնի, տանիքը պէտք է ելնեմ, որ ցուրդի վրայէն
զայն աւելի լաւ իրիշկեմ, դիտեմ: Դուք չէք ճանաչեր Դերեկոյին,
ուստի պէտք է զայն ձեզ ծանօթացնեմ: Մի գեղանի աղջիկ է նա,
հասակը բարձր ու սլացիկ, նման Ծովասարի խաւարծիւին, աչքե-
րէն հուր, տեսքէն լոյս կը կաթի, մազերու հուսակները մինչեւ զիս-
տերը կ'իջնեն, որոնցմէ կախուած արծաթեայ ծոպերը քալած պա-
հուն շրնկչկալով ձայն կը հանեն. քսան տարեկանին կոխած է ար-
դէն եւ Տարօնայ մէջ աղջիկ մը ոթ հող է հասեր եւ որ չէ մոռու-
նացած արդէն, եւ կամ գէթ նշանուած չէ, «լուցուկ» անուն կու տան,
ու տընամնաց կը լինի, եւ ամուսնութեան հարցը կը կնճռուի: Գիւ-
ղի բոլոր տղաները կարգով սիրահարուած են անոր, եւ սակայն ծը-
նողները կը զգուշացնեն անոնց. «Հեռի կեցէք լաօ, այդ փորձանքէն,
էտոր առնողը կրակի մէջ կ'իյնայ. առնելը դիւրին է, պահելը դժ-
ուար»: Եւ սակայն տղաները կը շարունակեն երգեր հիւսել անոր մա-
սին: Ահա՛ երգ մը.

Դերեկոն իմն է, Դերեկոն քում չէ,
Դերեկո ջան,
Մեր դրան յառէջ քառսուն կարաս,
Դերեկո ջան,
Քառսուն կարսի գինին էր խաս,
Դերեկո ջան,
Վերցուր ձեռքդ զարծըթէ թաս,
Լեցուր զկըթխէն որ ընծի տաս,
Դերեկո ջան:

Դերեկոն ելեր կ'երթէր օղին,
Լուսնակ զարկէ վըզի դողին
Եւ զուրբան ենք իւր ըստեղծողին
Դերեկո ջան:

Դերեկոն ելեր կ'երթէր յէգին
Դերեկո ջան,
Ինքն ու ուր ջուխտակ տէգերկին
Կաքաւ կիշկէր հըտ իր քելքին,
Ղուրբան էղնիմ իր լուս տեսքին:

Դերեկոն կայնէ կալի պատին
Արչկան մանեց իջաւ գետին,
Դերեկո ջան,
Դերեկոն կը հանէր մարդու հողին
Դերեկո ջան:

Կ'աչքեմ որ Դերեկոն անցեր ու գացեր է, հետեւաբար իր երգն
ալ հոս կը լմնայ:

Բայց մի՞թէ Յառինչ գիւղի մէջ մէկ հատ Դերեկո կայ. Տարօնու
մէջ հարիւրի չափ հայաբնակ գիւղեր կան, եթէ անունները սկսիմ
մէջ հարիւրի չափ հայաբնակ գիւղեր կան, եթէ անունները սկսիմ
շարել, կը ձանձրանաք: Ամէն մէկ գիւղի երեք կամ չորս տան մէջ
գեղուհի մը կայ: Ահա կը նշմարեմ ես արդէն հեռուէն Մարօն է. կու
գայ լիք կուժը մէկ ուսին դրած, ան կը քալէ յուշիկ, յուշիկ, գլուխը
միտարհած եւ աչքերը տրտում. միշտ տխրամած է ան, եւ ո՞վ է
պատասխանատու իր թախիծին, եթէ ոչ միայն ինքը, ո՞վ ասաց որ
եղնէ ու իր հօգրըրցեղ տղու վրէն ծըռի, գիւղի քահանան, մեծօրէնքն
ու պառաւները այդ գայթակղութեան չեն դիմանար.

«Իսկի մարդն իր ձեռքով իր արիւնը կը պղտորէ՞» ու ան դար-
ձեր է բերնի ծամոց. գիւղի մէջ, տղան, Արչօն, իր վիշտի հետ,
գլուխն առեր ու կորեր է օտարութեան մէջ, մնացեր է Մարօն, որ

Իր դարդը քաշէ, եւ սակայն գիւղի երիտասարդները զայն կը սիրեն
ու կը շարունակեն զայն ձէնկել իրենց երգին մէջ:

Կանչէ կըռռունկ կանչէ,
Քանի դարուն ա,
Աշխարհին արեւ ա,
Ընծի դուման ա:

Կանչէ ջանօ կանչէ,
Քանի դարուն է
Ղարիքներու սիրտը
Գունդ, գունդ արուն է:

Արի, Մարօ, արի
Խըռով մը մընա
Իտա սուտ դուն եէն
Մարդու չը մընայ:
Իտա սուտ դուն եէն
Ինծ, քե չի մընայ:

Ջուխտ մը կըռռունկ իջան
Սասնայ սարերուց
Փալադ գիսի ջոկեց
Իմ նազլի եարուց:

Ջուխտ մը կըռռունկ իջան
Մըր արտու սէղին,
Իմ ու քու մեղքն ընկնի
Տէրտէրօջ վըղին:
Մեր պըսակի համար
Նա չէտուր իզին:

Երկինքը ամպեր էր,
Գետին ալ թաց էր,
Մարօն բակ պառկուկ էր
Երեսը բաց էր:
Բուր ու բուրմունքն ասես,
Յորենի հաց էր:

Երկինքը ամպեր էր
Գետին շաղերով,
Մարօն էր ժամ կ'երթար

Վերին թաղերով,
Օսկի բլազուկ ձեռք
Ալմաստ ակերով:

Կ'արժէր զգումրի, Թիֆլիս
Ալմաստ բաղերով:

Բերան զգըվիթ էր,
Լեզուս լէ դալամ,
Սըրդիկս բաղչայ էր
Մէջ ցանած ուհան.
Ես կը սիրեմ զՄարօն
Թըխ պատուի ալամ:

Մարօն ալ անցեր դացեր է. ուրեմն իր երգն ալ հոս պէտք է
լրանայ:

* * *

Կէսօրը կոտրեր է, ու արեւը դադաթից վար թեքուեր է. գիւ-
ղին շուրջ պարտէզներուն մէջ, աղջիկ տղայ հաւաքուած տապկոց
կ'անեն (picnic): Ժախով ձուածեղ կ'եփեն, ու շերեփ ու չոքիկով պաղ
թան կը խմեն ու մինչեւ իրիկուն կը պարեն ու կը խաղան: Համ-
բարձման, Վարդավառի ու Աստուածածնի տօնական օրերն են: Աղ-
բարձման, Վարդավառի ու Աստուածածնի տօնական օրերն են: Աղ-
ջիկ, տղայ քով քովի, թեւ թեւի, ընդարձակ, կիսաբոլորակ շրջանակ
մը կը կազմեն:

Պարն ղեկավարողն է ամենաչքառու երիտասարդը, որ նախշուն
թաշկինակը աջ ձեռքին, օգին մէջ ծածանելով պարերգը կը սկսի
եւ միւս տղաները իրեն կ'ընկերանան, ու աղջիկները անոնց բերա-
նէն առնելով յանկերգը ետ կը դարձնեն: Ի հարկէ առաջին պարը
Գովանդ պարն է, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ Տարօնայ գովքը, որ այս-
պէս կը սկսի:

Տարօնայ չորս բոլոր
Մանր ու բետ գեղ էր,
Ձէն եարն որ կը սիրենք,
Խորոտկի ցեղ էր:
Ինքան որ կերիշկէր
Իմ հոգուն դեղ էր:

Ըդ Մըշու չորս բոլոր
Մանր ու բետ գեղ էր,
Ձէն եարն որ սիրեցի

Խորոտկի ցեղ էր.
Եւ որ ընծի կերիչէր
Իմ հոգուն դեղ էր:

Զբաղէչ կը գովեն,
Չորս դեղ քըրդանոց,
Ես քե սիրեցի,
Դըռ դուն օրօրոց,
Որ երբ մեծանաս,
Էղնինք գիրկ ու ծոց:
Յօրի իմ սըրտին
Դըրիւր դարդ ու խոց:

Ցորեն եմ ցանի
Ելեր է պառկի,
Պըզտկուց իմ սիրի,
Չըմ կընայ թորկի,
Շընութեն էլ կենէ
Չը կընայ զարկի:
Ինչ էնիմ, սիրեր իմ,
Չըմ կընայ թարկի:

Ցորեն իմ ցանի
Վըր դութնի աղան,
Էլեր է շաղ կիտայ
Հըդ արեգական,
Դէ՛ մարալ, դէ ջէյրան,
Ձեր հոգուն հայրան,
Վարենք ու ցանենք,
Աստուած պահապան:

Բոստան իմ ցանի
Իտա դարակող,
Աստուած անիծէ
Սըմլայ արտ ու հող.
Շամամ * չը հասցուց

(*) Շամամը կանաչ ու դեղին գծերով անուշաբոյր պտուղ մըն է, սեխի ըն-
տանիքէն, փոքր վարունգի չափ պտուղ մըն է, զոր աղջիկները իրենց գօտիի մէջ
կամ սրտանոցին ետեւ վը դնեն, իր անոյշ բուրմունքին համար, երբ տղոց հետ
պարեն կամ տեսակցին:

Ճամբենք եարոջ փոխ.
Առ լէ, լէ, լէ, լէ, լէ,
Եարըմ գօրանի:

Ապա պարի ձեւը կը փոխուի, գովանդին կը յաջորդէ թըռնոքին:
Ապա երկու աղջիկներու մենապարը, որ կը սկսի ճըթնեկ զարնելով,
բթամատի եւ միջնամատի հպումով: Ապա կը յաջորդէ Սասունցոց
ռազմական փափուռէն, ապա կու գայ խընուոցոց կամկաք, կամկաք
դուրան պարը:

Իմալ ենք, իմալ ենք,
Իմալ ենք ես քո սիրուն.
Ձերթ մեղրէման դիր դէմ գոլուն
Հալենք, թափենք քարերուն:

Իմալ ենք ես քո արով
Բաղեղ ենք կանաչ կապով,
Փաթուենք, էլնենք ձեր պատով,
Հըմալ ենք ես քո յապով:

Իմալ ենք ես քու դարտէն,
Լոր մը թըռաւ մըր արտէն,
Կըտրաւ իմ սըրտի փարդէն.
Համալ ենք ես քո դարդէն

Սասնայ կ'ենէր բարակ ծուխ,
Ես եար մ'ունենք բըլանուխ.
Հարաւ քամին մաղէր զիս,
Մէջ քու ծոցին թաղէր զիս:

Վերջինքի պահն է, երկու չեք (քայլ) կայ որ արեգակն իննակ-
նեան լերանց ետեւ իջնէ, աղջիկ տղայ քրտնած ու յոգնած են, պարն
առաջնորդող երիտասարդը մէջտեղ կանգնած, բարձրաձայն վը կան-
չէ (փայդո՛սթ, տան տէրն հաց կ'ուտէ), որ կը նշանակէ թէ խըն-
ճոյքը վերջացած է: Գիւղամիջից ու նախրապնից կը լսուի ժխոր, որ
գնալով կը բարձրանայ, մօտիկ պարտէզներէն կը լսուի դառնուկ-
ներու մայիւնը, հորթերու կանչը, կովերու բառաչիւնը եւ մատակ-
ներու թաւ գողոցը, հարիւրաւոր կովեր, կաթից ծանրացած ըս-
տինքներով եւ վար կախած ծընպտուկներով կեցեր են ու կը բառա-
չեն: Նախախնամութեան ձայնն է այդ, ապրող էակի նախնական ըզ-
գացումն է, բնազդն է այդ, որ կ'ուզէ նախ, իր ձագուկները կե-

բակրել եւ զանոնք կաթի կը կանչէ, եւ ապա հեղաբարոյ կը կանգնի կըթուորներու, նոր հարսերու եւ աղջիկներու, ծանր հողամաններու, կթոցներու մօտ, կթուելու համար. տուէք ինծի այդ ոչխարներու մայիւնը, այդ հորթերու կանչը, այդ կովերու բառաչը, այդ մատակներու թաւ դողուցը, ու ես հաճոյքով ձեզ կը թողում Հոռմի Գոնատանցան, Միլանոյի Սկալան, Նիւ Եորքի Մեթրոպօլիտան օրերաները. տուէք ինծի մեր նախնադնի ճախճախուտի առուակի հեղասահ գլղլանքը. իր վերեւից բխող եօթ աղբիւրներու միացեալ լեզուակներով, ու ես ձեզ կը նուիրեմ Բրամսի, Մոցարթի եւ Հայդնի սիմֆօնիաները:

Ահա այսպէս էր Տարօնը, երբ ես զայն ձգեցի հաղար ինը հարիւր տասի Վարդապետի վաղորդայնին, հարիւրաւոր հայաչէն աւաններու հազարաւոր թոնիրներէն օրհնութեան եւ առատութեան ժանդառի մուխը՝ բուրմառներու նման դէպի երկինք կ'անէր: Ու մեր բնականոն կեանքը կը շարունակուէր: Ճշմարիտ է որ մենք կ'աշխատէինք՝ Թուրքը կը վայելէր, մենք կը վարէինք ու ցանէինք՝ Թուրքը կը տանէր եւ Գիւրտը կը դողնար ու կը յափշտակէր. ճշմարիտ է այդ: Բայց երկուստեք վարժած էինք այդ արարքներուն, ու այդ ամէնը բնական կը թուէր. ու այժմ բարեկամներ եւ ծանօթներ, ելեր ինծի՝ լըսէք թէ «Ցնորած ես, Տարօնը այլեւս գոյութիւն չունի, հայի շունչն անգամ չկայ անոր մթնոլորտի մէջ»:

Անկարելի է այդ, չեմ հաւատար, միայն այն ատեն կը հաւատամ, երբ իմ հարազատ աչքերով տեսնեմ, որ երկնից մէջ Արարիչն ալ մահացեր է, ու հրեշտակները՝ փող ու շեփորով, տաղ ու ասմունքով անոր թաղումն է կը կատարեն, ամպի ծուէններուն մէջ պարուրելով անոր աննիւթեղէն էութիւնը...

Ու այն ատեն, իմ հոգու խորքից սեւ հառաչանք մը կը փրթի, որու վանկերը հրեղէն մոշիկներու վերածուելով հետեւեալ վերտառութիւնը կը գրեն.

Ո՞վ եղաւ այն մարդը, այն իշխանութիւնը, որ Յեղափոխութեան արնախառն գինիով հարբած, Տարօնն ու Վասպուրականը, Ղարսն ու Արտահանը, Այրարատն իրջլուխտակ Մասիսներով իբրեւ ընծայ Թուրքին նուիրեց:

Օրը վերջացաւ Տարօնայ մէջ:

ՏՈՔԹ. Ա. ԱԼԻԽԱՆՆԱՆ
(Մուսասիբքի)

Հ. ՂՈՒԿԱՍ ՍԵՐԱՍՏԱՅԻ

1709 - 1752

ՀԵՂԻՆԱԿ ԴԱԻԻԹ ԲԵԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Դաւիթ Բեկի հերոսամարտին 250ամեակը տօնախմբուած ատեն, չենք կրնար չանդադառնալ անոր վրայ՝ որ սերտօրէն միացած է Դաւիթ Բեկի պատմութեան հետ, առանց որուն Ղափանի Հայրենասիրական արարքը պիտի մնար ծածուկ, անհետանալով այն անթիւ ազգային հերոսութիւններուն հետ՝ որոնք անցեալին մէջ կատարած են մեր նախնիքները, առանց հետք մը ձգելու մեզի: Այդ դէմքը՝ Մխիթար Աբրահօր աշակերտներէն՝ Հ. Ղուկաս Սերաստայիին է, մականունով Ստեփանոսեան, որուն հայրենասիրական ոգին կը պարտինք Դաւիթ Բեկի պատմութիւնը:

1728ին կ'աւարտին Դաւիթ Բեկի պատերազմները. անոր զօրավարներէն Ստեփանոս Շահումեան, որ ականատեսներու վկայութեամբ է «անձն բարի յոյժ», կ'անցնի Լիվոնոյ ու ապա Վենետիկ. 1733 Հոկտ. 16ին կը գտնենք զինքը Ս. Ղազար, ուր խմբելով իր չորս կողմը հայրենասէր վարդապետներն ու նոյնիսկ աշակերտութիւնը, որոնց մէջն է նաեւ Ղուկաս Սարկաւազ, կը պատմէ իր անցեալ կեանքն ու մղուած ազգային հերոսամարտը: Արիւնի ունեցած ծանօթութիւններուն համաձայն, Ստեփանոս Շահումեան դեռ Վենետիկ կը գտնուի 1736-1737 թուականներուն, եւ շատ հաւանաբար նետիկ կը գտնուի 1736-1737 թուականներուն, եւ շատ հաւանաբար այդ շրջանին է որ գրի առնուած է Դաւիթ Բեկի պատմութիւնը, Հ. Ղուկաս Սերաստայիի գրիչով:

Հ. Ղուկաս Սերաստայիի նման գործի մը ձեռնարկելու դադափարը՝ ապացոյց է իր հանճարին, պատմական գործերու կարեւորութեան ըմբռնումին ու մանաւանդ բացառիկ հայրենասիրութեան. չէր բաւականացած լսելով պատմութիւնը, չէր դժագած իր խանդավառութեամբը, այլ ուզած էր նոյն խանդը աւանդել յաջորդներուն, նոյն հայրենասիրական ոգին վառ պահել ապագայ սերունդը: